ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
«ԱԿՆԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Էլ. հասցե՝ aknashen@schools.am
Հեռախոս՝ 093 - 13 – 88 – 12

18/11/2024թ.
Ելից № 33

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանին

Հարգելի պարոն Խուդաթյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Ակնաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը երկրորդ անգամ հայտարարում է մրցույթ ֆիզիկա (11ժամ). ինֆորմատիկա և ԹԳՀԳ (9 ժամ) առարկաների ուսուցիչների թափուր հաստիքների համար:

Կից ներկայացնում ենք հայտարարության տեքստը:

Դպրոցի տնօրեն՝ Ն. Բաղդասարյան

Կատարող՝ Ա. Դավթյան
Հեռ. 093-36-62-03

ՀՀ Արմավիրի մարզի «Ակնաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ը հայտարարում է մրցույթ ֆիզիկա (11ժամ). ինֆորմատիկա և ԹԳՀԳ (9 ժամ) առարկաների ուսուցիչների թափուր հաստիքների համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 19–ից մինչև դեկտեմբերի 2–ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00–ից 15:00–ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 6–ին ժամը 15:00–ին, ՀՀ Արմավիրի մարզի «Ակնաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ում:

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Ակնաշեն բնակավայր, Այգեգործների 2:
Տեղեկությունների համար զանգահարել 093138812 հեռախոսահամարով: